Վահան Տերյան

Սև գիշե՛ր, և հուշե՛ր, և խոհե՛ր անհամար...

Սև գիշե՛ր, և հուշե՛ր, և խոհե՛ր անհամար,
Մոռացված երազներ՝ շուշաններ թառամած,
Խնդություն հեռացած և՛ անցած, և՛ անդարձ,
Տրտմություն մենավո՛ր, միաձա՛յն, միալա՛ր...

Մշուշներն են սահում... Սոսավում է ուռին...
Իմ օրեր անհատնում, անխնդում և անտուն.
Ցնորքնե՛ր լուսավառ, ընդունայն, ապարդյուն,
Մոռացված է հավետ արևոտ ձեր ուղին...

Սև խոհեր անսպա՛ռ, անհամա՛ր, անհամա՛ր,
Սև գիշե՛ր, և հուշե՛ր, և հուշե՛ր ընդունայն,
Երազնե՛ր իմ անդարձ ծաղիկնե՛ր իմ գարնան.
Ի՞նչ կանչով ձեզ կանչեմ, ինչպես լամ ձեզ համար: